ռի, որոյ վասն կրեաց բազում տառապանս և զրպարտութիւնս յայնց պարտատեարց, որք համակամ էին կողոպտիչ եղելոցն։

Մինչդեռ նա յայսպիսի իրս պատաղեալ էր, վարեցաւ 'ի Պատրիարքութենէ Սահակ վարդապետ եւ նստաւ 'ի տեղի նորա Յովհաննէս վարդապետ Գանձակեցի։ Եւ սա առաքեաց յԵրուսաղէմ զարս չորս, որք յառաջագոյն իսկ բազում չարիս հասուցեալ էին վանաց Ս. Յակոբայ։ Եհաս գուժ առ Յովհաննէս վարդապետ, որ այն ինչ յուղարկեալ էր զուխտաւորս 'ի տեղիս իւրեանց. թէ ահա գայ Պալիքեսիրցին ընդ ուխտաւորս փոխանորդ և վեքիլ. եւ զկնի սակաւ աւուրց եկն եմուտ յԵրուսաղէմ ընդ արբանեկօք իւրովք։

Եւ զկնի աւուրց ինչ ձեռնարկեն 'ի կահ և 'ի կարասիս տանն, և ժողովեալ զամենայն պղնձեղէնս՝ 'ի միում գիշերի գաղտագողի իջուցին 'ի Յոպպէ, և անտի յԵգիպտոս, և զայլ իրս յայլ տեղի. զի համարձակ վաճառեսցեն, եւ զմեծամեծ խալկինան, զորս չինեալ էր Գրիգոր Պարոն Տէր, ետուն քաղաքապետին 'ի տուգանս, որք են այժմ 'ի Քերրոն 'ի ձեռս այլազգեաց՝ վկայ չարութեանց նոցին։ Զասունս և զպարտէզս և զայլ կալուածս վանաց, առ երեւոյթ իբրեւ թէ 'ի գրաւի դնէին, բայց 'ի ծածուկ վաճառէին։ Ապա խորտակեցին զամենայն անօթս եկեղեցւոյ զարծաթեղէնս և զոսկեղէնս, զխաչս, զսկիհս, բուրվառս, տապանակս, քշոցս, և զկանթեղս, եւ վաճառէին այլազգեաց անարգ գնով. 'ի բաց հատեալ նուազեցուցին զոգեպահ կերակուրն միաբանից մնացելոց, և յետոյ խապառփակեցին զտնտեսատունն։ Եւ 'ի գալ նոր Տեղակալաց՝ ամսօրեայ ժամանակաւ կացէին ընդ միմեանս. նորքն հնոց վրէժխնդիր, հինք նորոց քինառուք. մատնիչ լեալ իրերաց անկանէին 'ի տուգանս, եւ վատնէին զարդիւնս ժողովրդոց 'ի յագուրդ կրից իւրեանց։ Դէզադէզ բարդեալ կուտեցան տոկոսաւոր պարտք եւ ոչ զոք գտանէին այնուհետեւ առնուլ դրամս, թէեւ կաշառս խոստանային երաշխաւորաց ընդ գրաւոյն, մինչ 'ի գալ նոր ուխտաւորաց. այլ ոչ ինչ օգտեցան, զի բարձեալ էր 'ի նոցանէ յոյս հաւատարմութեան։ Զայս ամենայն տեսեալ պար-